

Հաստատում եմ՝ 14 նոյեմբերի 2025թ.

Հայ-Ռուսական համալսարանի
գիտական գծով պրոեկտոր,
փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,
պրոֆեսոր Ավելախյան Պարզե Մերգելի

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ



Վարդուիի Գագիկի Միքայանյանի

**Իրավաբանական փաստաթղթերի քարգմանության խնդիրը գործառական-
հաղորդակցական լույսի ներքո**

թեմայով

Ժ.02.07 «Ռումանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության վերաբերյալ

Իրավական պաշտոնական փաստաթղթերը մեծ կարևորություն են
ներկայացնում, քանի որ կարգավորում են հասարակական, անհատական և
միջազգային հարաբերություններ: Սա նշանակում է, որ ցանկացած իրավական
փաստաթուղթ պետք է ներկայացվի ճշգրիտ, երկիմաստությունն ու
տարրնթերցումները բացառող լեզվով, հատուկ ընտրված բառապաշտություններով, լեզվական
և խոսքային առումով ճիշտ ձևակերպված՝ պահպանելով լեզվին բնորոշ
կառուցվածքային և ոճական բոլոր առանձնահատկությունները: Նշված
փաստաթղթերը, հարելով իրավաբանական խոսությին, ձևավորվում են լեզվի և
իրավունքի փոխազդմամբ և ուսումնասիրվում լեզվաիրավագիտության շրջանակում:

Իրավական փաստաթղթերի թարգմանությունը առանձնապես պատասխանատու և բարդ գործընթաց է, քանի որ թարգմանիչը պետք է խորապես տիրապետի սկզբնաղբյուր և թիրախ լեզուների ինչպես լեզվաբանական, այնպես էլ իրավաբանական և օրենսդրական առանձնահատկություններին և բնորոշմանագիտական նորմերին:

Այսպիսով, սույն ատենախոսության հետազոտության առարկան իրավական փաստաթղթերն են, մասնավորապես՝ անգլերեն միջազգային պայմանագրերը անգլերեն և հայերեն տարբերակների համեմատական լեզվական և թարգմանական վերլուծությամբ և որոշակի առանձնահատկությունների վերհանմամբ։ Իրավական փաստաթղթային խոսույթում լեզվական տարբերի փոխհարաբերությունը կրում է իմաստային և գործառական-հաղորդակցական նպատակառուղղված բնույթ, որի ուսումնասիրությունը կարևոր է թարգմանական խնդիրների ճիշտ լուծման համար։ Հեղինակը նպատակ ունի բացահայտել այն բոլոր խնդիրներն ու այն ներլեզվական և արտալեզվական գործոնները, որոնք ապահովում են տվյալ խոսույթային տարատեսակի լիարժեք իրացումը։

Հետազոտության հիմնական նպատակն է լեզվաիրավագիտական մոտեցմամբ բացահայտել իրավական փաստաթղթերի՝ հատկապես պայմանագրերի ոճագործառական և թարգմանական առանձնահատկությունները՝ ցույց տալով լեզվի հիմնարար դերը իրավաբանական խոսույթի ձևավորման մեջ։

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է իրավական փաստաթղթերի՝ ներպետական և միջազգային հարաբերությունների ճիշտ կազմակերպման, օրենքի գերակայության և իրավական համակարգերի նկատմամբ հանրային վստահության ամրապնդման գործում ունեցած առանցքային դերով։

Ատենախոսության գիտական նորույթը իրավական փաստաթղթերում/պայմանագրերում առկա լեզվական միավորների՝ եզրույթների, հապավումների, բառերի, բառակապակցությունների, շարահյուսական միավորների ճիշտ ընկալումն է և դրանց համարժեք ձշգրիտ թարգմանությունը ոչ միայն լեզվական առանձնահատկությունների, այլև արտալեզվական համատեքստի հաշվառմամբ։

միտված լինելով բացահայտել իրավաբանական փաստաթղթերի իրավաբանական և պաշտոնական-գործարար ոճերի համադրման վրա հիմնված միջզիտակարգային բնույթը: Այլ կերպ, իրավական փաստաթղթերի ուսումնասիրությունը բոլոր լեզվական մակարդակներում հնարավորություն է տալիս դիտարկել դրանք որպես իրավաբանական և պաշտոնական խոսքի գործառական միասնության վրա հիմնված խոսքային տարատեսակ:

Հետազոտության տեսական արժեքը պայմանավորված է իրավական փաստաթղթերի լեզվական, արտալեզվական, ոճագործառական, թարգմանական և հաղորդակցական առանձնահատկությունների համակարգված ուսումնասիրությամբ, բազմազան լեզվաբանական դպրոցների ու մեթոդների տեսական դրույթների բննարկմամբ և նոր մոտեցումների առաջադրմամբ:

Հետազոտության գործնական արժեքը պայմանավորված է նրանով, որ վերլուծված և մշակված նյութը կարող է արդյունավետորեն կիրառվել լեզվաիրավագիտության, լեզվի մշակույթի, հաղորդակցության տեսության և գործառական ոճագիտության բազմաբնույթ հետազոտական աշխատանքներում, ինչպես նաև անգլերենի գործնական ուսուցման ոլորտում՝ միջազգային իրավաբանական փաստաթղթերի լեզվի և ոճի ուսումնասիրության նպատակով:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու զիսից՝ իրենց ենթագլուխներով և ծանոթագրություններով, եզրակացությունից, գրականության ցանկից և հապավումների՝ AntConc թարգմանական գործիքի կիրառմամբ կատարված կորպուս հետազոտության արդյունքներով և դրանք պարունակող հավելվածից:

Ներածության մեջ ներկայացված են իրավական փաստաթղթերի ուսումնասիրության հիմնահարցերն ու խնդիրները, հիմնավորված է թեմայի և փաստական նյութի ընտրությունը, ընդգծված են ուսումնասիրության ոլորտը, առարկան, արդիականությունը և գիտական՝ նորույթը, ձևակերպված են մեթոդաբանական հիմքերը, գործնական նշանակությունն ու տեսական արժեքը, ինչպես նաև սահմանվել են հետազոտության նպատակներն ու խնդիրները:

Առաջին գլխում (*Իրավաբանական խոսությը գործառական ոճերի համակարգում*) ատենախոսը ներկայացնում է խոսքի գործառական դասակարգումը, իրավաբանական ու պաշտոնական խոսություների, ինչպես նաև իրավական փաստաթղթերի գրաված տեղը լեզվի գործառական համակարգում՝ ընդգծելով դրանց կարևոր դերը հասարակության և պետության գործունեությունը կարգավորելու գործում: Նշվում է, որ իրավաբանական և պաշտոնական-գործարար խոսություները բաժանվում են ոճագործառական հաղորդակցական տարատեսակների, որոնցից մեկն էլ հենց իրավական փաստաթղթերն են, որոնց լեզուն հանդիսանում է իրավաբանի և թարգմանչի հիմնական գործիքը՝ հարմարեցված իրավաբանական և պաշտոնական խոսություներին և հասարակական գործունեությունը ապահովող իրավահարաբերություններին: Այս գլխում ատենախոսը նաև ուշադրություն է դարձնում բարիմաստի, եզրույթների, հապավումների, համառոտագրությունների, բառակապակցությունների բազմաբաղադրիչ կապակցությունների և ձևաբանական կոնկրետ նորմերի՝ հոլովման, խոնարհման, հոգնակիության կանոնարկված տարբերակների դերին և նշանակությանը: Նշվում են նաև շարահյուսական կառույցների, հատկապես երկրորդական նախադասությունների և հոմանշային կառույցների գործառական նշանակությունը և դրանց թարգմանական առանձնահատկությունները:

Երկրորդ գլխում (*Իրավական պաշտոնական փաստաթղթերի թարգմանական-հաղորդակցական առանձնահատկությունները*) դիտարկված են իրավական փաստաթղթերի թարգմանության տեսական հիմքերը, մոտեցումները և գործընթացը, ինչպես նաև դրանց ընթացքում առաջացող իրավական բացերը: Նշվում է, որ բնագրի առանձնահատկությունները լիարժեք արտահայտելու համար թարգմանիչը պետք է խոսքիմաստային խնդիրների լուծումից հետո առանձնակի ուշադրություն դարձնի դժվար թարգմանելի բառաձևերին, արտահայտություններին, ինչպես նաև լեզվական կաղապարներին և կառույցներին: Ընդգծվում է, որ եզրույթային իմաստային համարժեքները մեծապես ազդում են թարգմանության որակի, ճշգրտության և բնագրի հետ համարժեքության վրա:

Բառիմաստային մակարդակում իրավական փաստաթղթերի ձիշտ թարգմանության կարևորությունը պարզելու համար ատենախոսն ուսումնասիրության նյութ է ընտրել 2009 թվականին ՀՀ կողմից վավերացված Պաշտոնական փաստաթղթերի հասանելիության մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան» և դրա անգլերեն տարբերակը: Ատենախոսն ընդգծում է, որ վերոնշյալ համատեքստերում խստորեն պահպանվել են իրավաբանական խոսույթին և իրավական փաստաթղթերին բնորոշ բառիմաստային, շարահյուսական (զուգահեռ և դերբայական կառույցներ) և կետադրական նորմերը: Նման ձևավորումն ապահովում է պայմանագրի լիովին համապատասխանությունը իրավաբանական և պաշտոնական-գործարար խոսույթների պահանջներին:

Այս գլխի վերջին, երրորդ ենթագլխում հեղինակը առանձնապես կարևորում է հապավումների ձիշտ թարգմանությունը, որը միանգամայն բարդ գործընթաց է և լուրջ մարտահրավեր է ներկայացնում ինչպես հայերենից անգլերեն, այնպես էլ անգլերենից հայերեն փաստաթղթային թարգմանություն կատարելիս: Էական կարևորություն է ձեռք բերում իրավական լեզվի ճշգրիտ իմացությունը, քանի որ հապավումների սխալ կամ ոչ լիարժեք թարգմանությունը կարող է փոխել սկզբնադրյուրի իմաստը, ստեղծել ընթերցողի մոտ շփոթմունը և նույնիսկ փաստաթուղթը դարձնել անվավեր: Կորպուսային վերլուծությամբ կատարված հատվածը արժանի է հատուկ դրվատանքի: Ըստ ատենախոսի՝ կորպուսային վերլուծությունը ցույց է տալիս հայերեն և անգլերեն հապավումների՝ կիրառության անհամարժեք համամասնությունը՝ համապատասխանաբար 7 և 61, ինչը վկայում է լեզվական ու տեխնոլոգիական թերությունների և թարգմանական խնդիրների առկայության մասին: Եզրակացվում է, որ մինչդեռ անգլերեն հապավումների դեպքում արդեն կիրառվում են համակարգված և հսկայածավալ տվյալների բազաներ, հայերենը դեռևս ետ է մնում տեխնոլոգիական նման զարգացումներից, և որ հայերեն կորպուսների զարգացման միջոցով հնարավոր կլինի մեծապես բարելավել թարգմանության որակը և ապահովել միջազգային պայմանագրերի ու փաստաթղթերի ճշգրիտ թարգմանությունը:

Եզրակացության մեջ հստակ ամփոփված են ուսումնասիրության արդյունքները:

Այսպիսով, Վարդուհի Միրիջանյանի ատենախոսությունը արդիական է թե՛ ուսումնասիրության առարկայի, թե՛ ընտրված մեթոդաբանության առումով։ Աշխատանքում ընդգրկված է լայնածավալ փաստական նյութ, որը հեղինակին հնարավորություն է տալիս կատարել ծանրակշիռ ընդհանրացումներ։ Ատենախոսությունը աչքի է ընկնում նյութի խորը ուսումնասիրությամբ և իմացությամբ, շարադրանքի հստակությամբ, գիտական խորքային վերլուծությամբ։

Բարձր գնահատելով ատենախոսի կատարած աշխատանքը՝ այդուհանդերձ կցանկանայինք ստանալ որոշ հարցերի վերաբերյալ պարզաբանումներ։

1. Աշխատանքում որոշ խառնաշփոթ է առաջացնում հեղինակի կողմից օգտագործվող *իրավաբանական խոսույթ* և *պաշտոնական-գործարար ոճ* տերմինների կիրառությունը։
2. Ինչպես գիտենք, լեզուն մշտապես փոփոխության է ենթարկվում։ Ինչո՞ւ է նախընտրելի կիրառել հնարանությունները հայերենում և անգլերենում։ Արդյո՞ք դրա նպատակն է խուսափել երկակի մեկնաբանություններից։
3. Ինչո՞ւ են բնօրինակի բարդ ստորադասական և դերբայական դարձվածով կառույցները հիմնականում պահպանվում իրավաբանական փաստաթղթերի թարգմանության ընթացքում։
4. Հոմանիշ գույգերի իմաստային տարբերությունները արդյո՞ք տեսանելի են իրավաբանական խոսույթում։

Վերը նշված հարցապնդումները ամենաին չեն նվազեցնում կատարված հետազոտության արժանիքները։ Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ իրականացված է բավականին լուրջ, տեսական և գործնական նշանակություն ունեցող հետազոտություն։ Ատենախոսությունը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները և հեղինակն արժանի է իր հայցածքանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին։ Մեղմագիրն իր կառուցվածքով և բովանդակությամբ համապատասխանում է ատենախոսությանը։

Հեղինակի տպագիր հոդվածները արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Վերոնշյալը թույլ է տալիս միջնորդել ԵՊՀ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի առաջ՝ Վարդուհի Գագիկի Միքայելյանին շնորհելու բանասիրական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանը Ծ.02.07 Ռումանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ:

Գրախոսությունը քննարկվել և հաստատվել է Ռուս-Հայկական (Ալավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի 2025 թվականի նոյեմբերի 14-ին կայացած N4 նիստում:

Ատենախոսության քննարկմանը ներկա էին Ռուս-Հայկական (Ալավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի հետևյալ անդամները՝ բ.գ.դ., պրոֆեսոր Կ. Մատինյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ա. Սիմոնյանը, բ.գ.դ., դոցենտ Մ. Սարինյանը, դոցենտ Ն. Թովմասյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Թումանյանը և այլք:

Առաջատար կազմակերպություն՝

Ռուս-Հայկական (Ալավոնական)

համալսարանի լեզվի տեսության և

միջմշակութային հաղորդակցության

ամբիոնի վարիչ,

բ.գ.դ., պրոֆեսոր՝

Հաստատում եմ

Գիտքարտուղար՝

.11.2025

Ա. Ա. Սիմոնյան

Ո. Ս. Կասարաբովա

